**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**

**Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

**Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1**

« » հուլիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-198-20.06.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 930 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-198-20.06.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացնում է հետևյալ դիտարկումները:

Նախագծով նախատեսվում է արբիտրի համար բարձրագույն իրավաբանական կրթությունը նախատեսել որպես պարտադիր պահանջ:

Այս առնչությամբ գտնում ենք, որ տվյալ օրենսդրական առաջարկը խնդրահարույց է հետևյալ հիմնավորումներով:

1. «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածից հստակորեն բխում է, որ կողմերն ազատ են սահմանելու արբիտրին ներկայացվող պահանջները՝ դրսևորելով ազատ կամահայտնություն և ինքնուրույնություն այդ հարցում:

Ինչպես երևում է վերոնշյալ հոդվածի վերլուծությունից, կողմերի ազատ կամահայտնությունն արբիտրի ընտրման հարցում սահմանափակվում է միայն տվյալ պարտադիր պահպանման ենթակա պահանջներով: Մասնավորապես, կողմերը կարող են արբիտրի համար սահմանել ինչ-որ պահանջներ կամ չսահմանել որևէ պահանջ, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը վերաբերում է արբիտրի տարիքին (պարտադիր պահանջ է նրա 25 տարեկան լինելը), նրա գործունակությանը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն գործունակությունը սահմանվում է որպես իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակություն) և քաղաքացու բարձրագույն կրթությանը:

Այսինքն՝ սահմանելով միայն իրավաբանական բարձրագույն կրթության պահանջ՝ կողմերի ազատ կամահայտնության սահմաններն ավելի կնեղացվեն, ինչը, կարծում ենք, չի բխում կողմերի շահերից:

2. «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ այդ օրենքի շրջանակներում «արբիտրաժ» նշանակում է ցանկացած արբիտրաժ՝ անկախ դրա՝ մշտապես գործող արբիտրաժային հաստատության կողմից կամ առանց նման հաստատության իրականացվելու հանգամանքից:

Այսինքն՝ սահմանելով բարձրագույն իրավաբանական կրթության պահանջը՝ այն կդառնա կիրառելի ինչպես *ad hoc*, այնպես էլ *ինստիտուցիոնալ* արբիտրաժի նկատմամբ:

Գտնում ենք, որ եթե որոշ տեսակի վեճերով ինստիտուցիոնալ արբիտրաժի դեպքում նման սահմանափակում նախատեսելը ինչ-որ տեղ կարող է հասկանալի լինել, ապա ad hoc արբիտրաժի դեպքում նման սահմանափակում դնելն արդարացված չէ, քանի որ անհարկի սահմանափակում է նրանց կամահայտնությունը:

3. Բացի այդ՝ առևտրային արբիտրաժի կողմից քննվող գործերի շրջանակն այնպիսին է, որ կարող է պահանջել տարատեսակ մասնագիտական գիտելիքներ և ոչ միայն՝ իրավաբանական:

Այսպես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի համաձայն «առևտրային» հասկացությունը ներառում է քաղաքացիական իրավահարաբերություններից առաջացող առևտրային բնույթի բոլոր վեճերը: Առևտրային բնույթը, առանց սահմանափակման, մասնավորապես՝ ներառում է բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների և նրանց հաճախորդների միջև կնքված գործարքներից բխող կամ դրանց հետ կապված վեճերը, ապրանքների մատակարարման և փոխանակման ու ծառայությունների մատուցման, առևտրային ներկայացուցչության կամ գործակալության, ֆակտորինգի, վարձակալության, լիզինգի, աշխատանքների կատարման, խորհրդատվության, նախագծման, լիցենզային, ներդրման, ֆինանսավորման, ապահովագրության, շահագործման կամ կոնցեսիայի, համատեղ ձեռնարկատիրության կամ արդյունաբերական, ձեռնարկատիրական համագործակցության այլ ձևերի, ծովային, օդային, երկաթուղային և ավտոմոբիլային փոխադրումների հետ կապված իրավահարաբերությունները: Ուստի առևտրային արբիտրաժի կողմից քննվող գործերով շատ դեպքերում այլ մասնագիտություն ունենալը կարող է առավել արդյունավետ լինել:

4. Սահմանելով պարտադիր իրավաբանական կրթության պահանջ՝ կստացվի, որ արբիտրներ կընտրվեն միայն իրավաբանները: Դժվար չէ պատկերացնել, որ երկու բարձրագույն կրթություն ունեցող անձինք քանակապես ավելի քիչ են, քան մեկ բարձրագույն կրթություն ունեցող անձինք: Ուստի այն դեպքերում, երբ վեճն իր բնույթով ունի, օրինակ՝ նեղ ֆինանսական բնույթ, կողմերը ստիպված կլինեն գտնել ֆինանսական ոլորտի մեջ մասնագիտացած իրավաբանի, կամ ֆինանսական ոլորտի մասնագետի, որն ունի նաև իրավաբանական կրթություն, ինչը, կարծում ենք, անհարկի կբարդացնի արբիտր ընտրելու ընթացակարգը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծով նախատեսված փոփոխության կատարման անհրաժեշտությունը բացակայում է:

Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ օրենքն արբիտրի գործնական հմտությունների հետ կապված պահանջներ չի սահմանում, ընդունելի կլիներ նախագծով օրենքի 11-րդ

հոդվածում արբիտրի համար սահմանել առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձի պահանջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

16 հուլիսի 2019 թվականի N 930 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արտակ Ասատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-198-20.06.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 16
Երևան

*ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-198-20.06.2019-ՊԻ-011/0*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ

## «ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի առևտրային արբիտրաժի մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի առաջին մասում «բարձրագույն կրթություն» բառերը փոխարինել «բարձրագույն իրավաբանական կրթություն» բառերով:

Արբիտր կարող է լինել 25 տարին լրացած, բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող յուրաքանչյուր գործունակ ֆիզիկական անձ:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## «ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Առևտրային Արբիտրաժի մասին օրենքի 11-րդ հոդվածի առաջին մասում նշվում է որ արբիտր կարող է լինել 25 տարին լրացած, բարձրագույն կրթություն ունեցող յուրաքանչյուր գործունակ ֆիզիկական անձ: Տվյալ նախադասության մեջ «բարձրագույն կրթություն» բառերը հարկավոր է փոխարինել «բարձրագույն իրավաբանական կրթություն» բառերով հետևյալ պատճառաբանությամբ.

Արբիտրաժային դատարանի գործընթացը իր բովանդակությամբ շատ մոտ է ցանկացած այլ դատական գործընթացի, ուստի և արբիտրը, որն ըստ էության ևս դատավոր է, պարտավոր է տիրապետել օրենսդրությանը, որպեսզի կարողանա ապահովել որակյալ և օբյեկտիվ դատական գործընթաց: Նա նույնպես պարտավոր է տիրապետել վճիռներ կայացնելու և կազմելու հմտություններին, որոնք իրավագիտության ոլորտի անբաժան մասն են կազմում, քանզի ուղիղ կապ ունեն օրենսդրության հետ:

Քանի որ արբիտրաժային դատարանում կարող են քննվել քաղաքացիական իրավահարաբերություններից առաջացող առևտրային բնույթի բոլոր վեճերը, բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների և նրանց հաճախորդների միջև կնքված գործարքներից բխող կամ դրանց հետ կապված վեճերը, ապրանքների մատակարարման և փոխանակման ու ծառայությունների մատուցման, առևտրային ներկայացուցչության կամ գործակալության, ֆակտորինգի, վարձակալության, լիզինգի, աշխատանքների կատարման, խորհրդատվության, նախագծման, լիցենզային, ներդրման, ֆինանսավորման, ապահովագրության, շահագործման կամ կոնցեսիայի, համատեղ ձեռնարկատիրության կամ արդյունաբերական, ձեռնարկատիրական

համագործակցության այլ ձևերի, ծովային, օդային, երկաթուղային և ավտոմոբիլային փոխադրումների հետ կապված իրավահարաբերությունները, ապա արբիտրը պարտավոր է տիրապետել բոլոր այն օրենսգրքերին, որոնցով պետք է առաջնորդվել տվյալ գործերը քննելու համար: Իսկ նման գիտելիքներ ձեռք են բերվում միայն իրավագիտական ֆակուլտետներում: Հետևապես, արբիտր լինելու համար բավական չէ ունենալ զուտ բարձրագույն կրթություն, այլև պարտադիր է, որպեզի անձն ունենա բարձրագույն իրավաբանական կրթություն: